

ԳԵՐՄԱՆԱ-ՀԱՅԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԶԱՆՔԵՐԸ ԵՐԿՈՒ
ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ
1918-1921 ԹԹ.

Բանալի բառեր – Էվալդ Շթիր, Ջեյմս Գրինֆիլդ, Յոզեֆ Մարքվարթ, Պաուլ Ռոնրբախ, Յոհաննես Լեյսիուս, Ընդհանուր ժողով, մշակույթ, պարբերական, գրքույկ, հրատարակում, Հայաստանի Հանրապետություն, Մխիթարյան միաբանություն, միություն, դասախոսություն

1919 թ. Գերմանա-հայկական ընկերության (այսուհետև՝ ԳՀԸ) քարտուղար Էվալդ Շթիրը հրատարակեց «Քրիստոնյաների գրկանքներն ու քրիստոնեական օգնությունը Թուրքիայում» վերնագրով հոդվածը, որում, անդրադառնալով հետպատերազմյան գերմանա-թուրքական հարաբերություններին, արձանագրում էր. «Գերմանա-թուրքական բարեկամությունը պատմական անցյալ է: Դա պատերազմի հետևանքն է [...]: Բեռլին-Բաղդադի (երկաթուղու – Հ. Մ.) կառուցումն ու դրա հետ կապված երազանքները խափանվեցին, և այս կապակցությամբ երկար քննարկումներ անելու իմաստ չկա: Առանց պատերազմի «դժբախտ» ավարտի, այսուամենայնիվ, գերմանա-թուրքական բարեկամական կապը խզվելու էր՝ երկու կողմից: Այն (գերմանա-թուրքական բարեկամությունը – Հ. Մ.) միշտ էլ սահմանափակ է եղել, գտնվում էր Էնվերի ու Թալեաթի չորս աչքի առջև և պահպանվում էր միայն անհրաժեշտությունից ելնելով»¹:

Նշենք, որ պատերազմի ավարտից հետո ոչ միայն գերմանա-թուրքական, այլև գերմանա-հայկական հարաբերությունները գտնվում էին ցածր մակարդակի վրա: Պատերազմից մեծ կորուստներով դուրս եկած երկու ժողովուրդներն էլ հայտնվել էին դժվարին կացության մեջ և ի վիճակի չէին միմյանց երաշխավորել ո՛չ քաղաքական աջակցություն, ո՛չ նյութական հովանավորություն²: Այդ իրադրությունում գերմանացի հայասերները խորհում էին վերակենդանացնել պատերազմի ստեղծած խոչընդոտների պատճառով ընդհատված գերմանա-հայկական մշակութային փոխառնչությունները, նպաստել, որ երկու ժողովուրդներին կապող թույլ թելերը հետգհետե ավելի ամուր դառնան: Հատկանշական է, որ զինադադրից և գրաքննության

¹ Stier E., Christennot und Christenhilfe in der Türkei // “Zeitschrift für Missionskunde und Religionswissenschaft”, 34 (1919), S. 123-140. Հմմտ. Meißner A., Martin Rades “Christliche Welt” und Armenien. Bausteine für eine internationale Ethik des Protestantismus, Band 22, Berlin, 2010, S. 267:

² Stier E., Ein Volk, das nicht sterben kann // “Christliche Welt”(CHW), 36 (1922), S. 153.

վերացումից հետո ԳՀԸ-ն ձեռնամուխ եղավ իր՝ 1914 թ. ընդունված կանոնադրության երկրորդ կետի¹, այլ կերպ ասած՝ սկզբից նեթ իր առջև դրված մշակութային նպատակների իրականացմանը: Ինչպես գիտենք, ընկերության պաշտոնական օրգան “Mesrop” պարբերականն առաջին համարի լույս ընծայումից հետո (1914 թ. հունիս) չունեցավ շարունակություն պատերազմի ժամանակաշրջանում²: Պատերազմի ավարտից հետո ԳՀԸ-ն չվերադարձավ նշված պարբերականի հրատարակությանը, այլ սկսեց տպագրել “Deutsch-Armenische Korrespondenz” (DAK) թերթը³, որը չէր կրում գաղտնի բնույթ և

¹ ԳՀԸ-ն, ըստ իր կանոնադրության երկրորդ կետի, հետապնդում էր հետևյալ նպատակները. ա) Գերմանիայում ստեղծել արդար ու անկողմնակալ կարծիք հայ ժողովրդի և հայերի շրջանում գերմանական ժողովրդի վերաբերյալ, բ) համակողմանի պատկերացում տալ համաշխարհային մշակույթում հայ ժողովրդի մատուցած ծառայությունների և հայ մշակույթի զարգացման հարցում գերմանական ժողովրդի ցուցաբերած ձգտումների վերաբերյալ, գ) օժանդակել գերմանացիների և հայերի, մասնավորապես՝ Գերմանիայում սովորող հայ ուսանողների անձնական կապերի զարգացմանը: Այդ նպատակների իրականացման համար նախատեսվում էր կատարել մի շարք աշխատանքներ, ինչպես, օրինակ, Հայաստանի իրադարձությունների վերաբերյալ ճշգրիտ տեղեկությունների հաղորդում գերմանական մամուլին, արժեքավոր հայկական գործերի թարգմանություն գերմաներեն և հակառակը՝ հայոց լեզվի, հայ մշակույթի և պատմության ուսումնասիրության համար Գերմանիայում հայագիտական գրադարանի հիմնադրում, հայկական դպրոցներում գերմաներենի դասավանդման խրախուսում, Գերմանիայում սովորող հայ ուսանողների համար տեղեկատվական կենտրոնի հիմնադրում և գերմանական ընտանիքների հետ նրանց շփումների ընդլայնում: Այս մասին տե՛ս **Սահակյան Ն.**, Գերմանա-հայկական ընկերության հիմնադրումը // «ՀՀ», 2016, թիվ 1, էջ 33-34:

² Այս մասին տե՛ս **Սահակյան Ն.**, Գերմանա-հայկական ընկերությունը եւ դր. Լիպարիտի առաքելությունը // «Էջմիածին», 2018, թիվ Ը, էջ 106-107:

³ Թերթի անվան ընտրության հեղինակը Է. Շթիրն էր: Նա վերցրել էր “Das Notwendige Liebeswerk” միության (որում ինքը հավասարապես գործում էր) պարբերական “Deutsch-Armenische Blätter”-ի անունը՝ դրանում կատարելով փոքրիկ փոփոխություն: 1918 թ. նոյեմբերի 12-ից հրատարակվող այդ թերթի ծավալը տարբեր համարների միջև տատանվում էր 4-8 էջի սահմաններում: DAK-ը երկար կյանք չունեցավ, քանի որ դրա տպագրության համար պահանջվող ծախսերը չէին ծածկվում անդամավճարների հաշվին՝ ԳՀԸ-ի անդամների փոքր թվաքանակի պատճառով: Թերթի վերջին՝ 12-րդ համարը, լույս տեսավ 1920 թ. փետրվարի 1-ին: 1921 թ. մայիսի 15-ի մի գրության մեջ Է. Շթիրը հաղորդում էր ԳՀԸ-ի անդամներին, որ ֆինանսական դժվարությունների պատճառով իրենք չեն կարող շարունակել այդ լրատուի հրատարակությունը և, ըստ այդմ, համաձայնության են հանգել Յոհ. Լեփսիուսի հետ՝ 1919 թ. նրա հիմնադրված «Դր. Լեփսիուսի արևելյան առաքելություն» («Հայաստանի օգնության գործ») կազմակերպության պաշտոնական օրգան “Der Orient”-ը (“Mitteilungen aus der Arbeit”) (որին ԳՀԸ-ն պարբերաբար տրամադրում էր «լուրեր Հայաստանում ստեղծված իրավիճակի վերաբերյալ») ԳՀԸ-ի անդամներին ուղարկելու շուրջ: Նա նաև նշել էր, որ իրենց կազմակերպությունն ի վիճակի է միայն հատուկ թողարկումների միջոցով իր անդամներին իրազեկել Հայաստանի իրադարձությունների մասին: Տե՛ս **Stier E.**, An unsere Mitglieder, den 15. Mai 1921, EZA Berlin: 1928 թ. ԳՀԸ-ն ձեռնամուխ եղավ նոր՝ “Mitteilungen der Deutsch-Armenischen Gesellschaft e. V. Berlin” վերնագիրով պարբերականի հրատարակությանը: Այն բաղկացած էր 4 էջից և պարունակում էր Հայաստանի ու հայ ժողովրդի ողբերգական ճակատագրի վերաբերյալ մի քանի կարճ հաղորդագրություն: Գլխավոր խմբագիրն էր 1927 թ. ապրիլից ԳՀԸ-ի

նախատեսված էր ընթերցող հասարակության լայն շրջանների համար: Թերթի գլխավոր խմբագիրն է. Շթիրն էր, որը նաև դրանում լույս տեսնող հոդվածների մեծ մասի հեղինակն էր: Նյութական դժվարությունների պատճառով թերթը լույս էր տեսնում անկանոն պարբերականությամբ¹:

ԳՀՀ-ն իր առջև նպատակ էր դրել DAK-ի միջոցով գերմանական հասարակությանը համակողմանի պատկերացում տալ հայերի ու Հայաստանում տեղի ունեցող իրադարձությունների վերաբերյալ: Հատկանշական է, որ այդ թերթի խմբագրության տարածած հաղորդագրության մեջ ընկերությունը խոստանում էր իրադարձությունները ներկայացնել պատմական իրողությունների համատեքստում: Այն նաև երաշխավորում էր իր հրապարակած տեղեկությունների հավաստիությունը՝ մատնանշելով, որ Բեռլինում էր գտնվում Հայաստանի Հանրապետության (ՀՀ) դիվանագիտական ներկայացուցչությունը, որի հետ իրենք սերտորեն համագործակցում էին²:

Նշենք, որ ԳՀՀ-ն դիմեց նաև Գերմանիայի առաջատար թերթերի ու ամսագրերի խմբագիրներին՝ խնդրելով ճշգրիտ տեղեկություններ հրատարակել Հայաստանի իրադարձությունների վերաբերյալ: Ուշագրավ է, որ 1919 թ.

նախագահի պաշտոնը զբաղեցնել Պաուլ Ռոնրբախը: 1928 թ. նոյեմբերին 2-րդ համարի լույս ընծայումից հետո այդ պարբերականի հրատարակությունը դադարեցվեց: Արխիվային փնտրտուքների արդյունքում ինձ հաջողվել է գտնել դրա միայն 2-րդ համարը: Տե՛ս «Mitteilungen der Deutsch-Armenischen Gesellschaft e. V. Berlin», № 2, November 1928, EZA Berlin: Նշենք, որ ԳՀՀ-ի անդամները ստանում էին «Der Orient»-ը մինչև 1938 թ.: 1939 թ. այդ պարբերականի հրատարակությունը դադարեցվեց: 1937 թ. Պ. Ռոնրբախն ու Արտաշես Աբեղյանը ձեռնամուխ եղան ԳՀՀ-ի նոր՝ «Mitteilungsblatt der Deutsch-Armenischen Gesellschaft e. V. Berlin» վերնագրով կանոնավոր պարբերականի հրատարակությանը: 1943 թ. դեկտեմբերից (թիվ 15-16) այդ պարբերականը կրում էր «Armenien. Mitteilungsblatt der Deutsch-Armenischen Gesellschaft» վերնագիրը, որի վերջին համարը լույս տեսավ 1944 թ. սեպտեմբերին (թիվ 17-18):

¹ Stier E., Geschäftsbericht der Deutsch-Armenischen Gesellschaft über das Jahr 1919, gestattet auf der Generalversammlung am 18. Mai 1920, unpagiert, EZA Berlin. DAK-ի առաջին երեք համարները թեմատիկ բնույթ էին կրում: Դրա՝ 1918 թ. նոյեմբերի 12-ին լույս տեսած 1-ին համարի քննարկման նյութը պատերազմի ժամանակաշրջանում «Հայ ժողովրդի ճակատագիրն» էր («Հայերի աքսորը», «Աքսորի իրականացումը», «Աքսորյալների ճակատագիրը», «Իրավիճակը հայկական պրովինցիաներում», «Թուրքահայաստանի ապագա պետական կառուցվածքը», «Իրադարձությունները հայկական Անդրկովկասում», «Կովկասահայերի պահանջները», «Հայաստանի կառավարության կազմը», «Հայաստանի ապագան», «Հայկական սփյուռքը»), 1918 թ. նոյեմբերի 25-ին հրատարակված 2-րդ համարը կրում էր «Գերմանական կառավարությունը և Հայկական հարցը» խորագիրը («Անտանտի մեղադրանքները», «Գերմանիայի մեղքը», «Ուժերի գերմանա-թուրքական փոխհարաբերությունը», «Գերմանիայի օգնությունը Հայաստանին», «Գերմանական քաղաքականության սխալները»), իսկ 1918 թ. դեկտեմբերի 2-ին լույս տեսած 3-րդ համարը քննարկում էր «Հայերի կոտորածների պատճառները» («Հայերի կոտորածն Արդահանում», «Արյունահեղությունը Բաքվում», «Իրադարձությունները Նուխիում և Արեշում», «Թուրքական կառավարության վերաբերմունքը հայերի նկատմամբ», «Հայերն ու վրացիները»): Չորրորդ համարից սկսած՝ DAK-ը հրապարակում էր Գերմանիայի և Անդրկովկասի հարաբերություններին առնչվող ընթացիկ տեղեկություններ:

² Von der Deutsch-Armenischen Gesellschaft, Deutsch-Armenische Korrespondenz, h.g. von Pfarrer Stier, Generalsekretär der Deutsch-Armenischen Gesellschaft, undatiert, EZA Berlin.

հունվարի 21-ին դեմոկրատական ուղղվածությամբ “Frankfurter Zeitung” թերթը հրապարակեց Գերմանիայի արտգործնախարարության (ԱԳՆ) խնդրանքով Է. Շթիրի շարադրած «Հայաստան»¹ վերնագրով հոդվածը, որը լուսաբանում էր գերմանական կառավարության, միությունների ու միսիոներական կազմակերպությունների, ինչպես նաև ԳՀՀ-ի հայանպաստ գործողությունները Առաջին աշխարհամարտի տարիներին:

Պատերազմի ժամանակաշրջանում Օսմանյան կայսրությունում հայերի հետ կատարված իրադարձությունների վերաբերյալ տեղեկությունները լրացվեցին և ավելի ամբողջական դարձան ԳՀՀ-ի նախագահ Յոհ. Լեփսիուսի՝ «Գերմանիան և Հայաստանը 1914-1918 թթ.»² դիվանագիտական փաստաթղթերի ժողովածուի հրատարակության և 1916 թ. լույս տեսած «Տեղեկագիր Թուրքիայում հայ ժողովրդի դրության մասին» գրքույկի վերահրատարակության շնորհիվ³: Նշված աշխատությունները բացում էին հայոց եղերական ողբերգությունների վարագույրը, փաստական հիմնավորումներով մերկացնում ցեղասպանության բուն կազմակերպիչներին, ապացուցում, թե որքան կարևոր էր գերմանական օգնությունը մահվան ճիրաններում հայտնված հայերի համար:

Դեռևս պատերազմի ավարտական փուլում ԳՀՀ-ն ծրագրել էր հրատարակել մի գիրք, որը կներկայացներ Հայաստանը՝ իր ամբողջ բազմազանությամբ և հայերին՝ որպես մշակութային բարձր աժեքներ կրող ժողովրդի: Դրա շնորհիվ գերմանական հասարակությունը, որի մեծ մասի, նույնիսկ մտավորականներից շատերի համար Հայաստանն «անծանոթ երկիր» (terra incognita) էր⁴, կտեղեկանար, որ այն ուշադրության էր արժանի ոչ միայն ողբերգական ճակատագրով, այլև հարուստ ու բազմազան մշակույթով:

Այդ նպատակի համար կատարված մի բավական մեծ նվիրաբերություն հնարավորություն ընձեռեց ձեռնամուխ լինել նախատեսվող գրքի հրատարակության պատրաստման գործին: Պ. Ռոհրբախը ստանձնեց խմբագրական աշխատանքների իրականացումը, իսկ Է. Շթիրը նամակագրական կապ հաստատեց Վիեննայի Մխիթարյան միաբանության հայրերի հետ՝ համագործակցության և գիտական խորհրդատվություն ստանալու նպատակով: «Աշխատությունը պետք է հրատարակվի մեծ թվաքանակով և հիմնականում ծառայի քարոզչական նպատակներին: Այն պետք է ունենա աշխարհագրական ու պատմական ակնարկ, ինչպես նաև՝ հոդվածներ Հայաստանի՝

¹ Stier E., Armenien, hg. in “Frankfurter Zeitung” // [http://www.armenocide.net/armenocide/armgende.nsf/\\$\\$AllDocs/1919-01-21-DE-001, PA-AA, R 14105](http://www.armenocide.net/armenocide/armgende.nsf/$$AllDocs/1919-01-21-DE-001, PA-AA, R 14105).

² Deutschland und Armenien 1914-1918. Sammlung diplomatischer Aktenstücke. Herausgegeben und eingeleitet von Dr. Johannes Lepsius, Potsdam, 1919.

³ St u Lepsius J., Der Todesgang des armenischen Volkes. Bericht über das Schicksal des armenischen Volkes in der Türkei während des Weltkrieges, Heidelberg, 1919:

⁴ St u Stier E., Geschäftsbericht der Deutsch-Armenischen Gesellschaft über das Jahr 1919, gestattet auf der Generalversammlung am 18. Mai 1920, unpagiert, EZA Berlin:

որպես մշակութային երկրի նշանակության, նրա պոետիայի, արվեստի, մասնավորապես՝ ճարտարապետության վերաբերյալ: Այն թերի կլինի, եթե դրանում խոսք չլինի Մխիթարյան միաբանության մասին, և եթե այն չներկայացնի վերջինիս մեծ դերակատարությունը հայ ժողովրդի մշակութային վերելքի գործում»¹, - գրել էր Է. Շթիրը Հայր Ներսես Ակինյանին հասցեագրված գույգ նամակներում:

Պ. Ռոհրբախի խմբագրությամբ և Յոհ. Լեփսիուսին՝ «հայ ժողովրդի բարերարին», ձեռնարկով «Հայաստան, հողվածներ հայկական երկրի և ժողովրդական բանահյուսության»² վերնագրով աշխատությունը լույս տեսավ պատերազմի ավարտից փոքր-ինչ անց՝ 1919 թ. վերջին: Այն բաղկացած էր 150 էջից, պարունակում էր 128 նկար և մեկ քարտեզ: Գրքում զետեղված հողվածները վերաբերվում էին Հայաստանի աշխարհագրությանը, պատմությանը, եկեղեցուն, դպրոցին, նրա տնտեսական նշանակությանը, ներկայացված էին քաղվածքներ հայ պատմագրությունից և նմուշներ հայկական պոետիայից: Այսպիսով, փորձ էր արվել հնարավորինս ամբողջական պատկերացում տալ մշակութային Հայաստանի մասին:

1919 թ. հրատարակվեց նաև արևելագետ և հայագետ, ԳՀԸ-ի հիմնադիր անդամ Յոզեֆ Մարքվարթի «Հայ ժողովրդի ծագումն ու վերակենդանացումը»³ խորագրով աշխատությունը, որի հիմքում հեղինակի՝ 1914 թ. ԳՀԸ-ի հիմնադիր ժողովում ընթերցած համանուն վերնագրով հողվածն էր: Այն բաղկացած էր երկու մասից: Առաջին՝ «Հայ ժողովրդի ծագումը» վերնագիրը կրող մասում (էջ 1-38) հեղինակը քննարկում էր հայ ժողովրդի ծագման, կազմավորման, նրա աստիճանական զարգացման, Հայկական լեռնաշխարհում վերջնական հաստատման հարցերը: Աշխատության հետազոտական այս հատվածի վերջնական եզրակացությունն այն էր, թե «հնում հայերը ապրել են Եվրոպայում՝ հույների ու թրակիացիների նախահայրերին մոտիկ»: «Գաղթելով Արևմուտքից՝ նրանք նախ հաստատվել են Փոքր Հայքում», այնուհետև «Երասխի հովտում» (Ք. ա. V դար):

Աշխատության երկրորդ՝ «Հայ ժողովրդի վերակենդանացումը» վերնագիրը կրող մասում (հավելված, էջ 39-63), Յ. Մարքվարթը ներկայացնում էր հայ ժողովրդի տառապանքների շղթան՝ սկսած բյուզանդական կայսր Հուստինիանոսի ժամանակներից մինչև ներկա ժամանակը, անդրադառնում

¹ Stier an P. Nerses Akinian vom 1. und 26. Juli 1918, Archiv der Mechitaristenkongregation Wien. Յ մ ս տ. **Meißner A.**, ն շ վ . ա շ խ., է ջ 270:

² Տե՛ս **Rohrbach P.** (Hg.), Armenien. Beiträge zur armenischen Lands- und Volkskunde, Stuttgart, 1919: Գրքում զետեղված էին Պ. Ռոհրբախի, Ամանդ Ֆրայլեր ֆոն Շվայգեր-Լեյխենֆելդի, իշխան Էրերհարդ ֆոն Վեսթարփի, Մելքոն Կրիշչյանի, Է. Շթիրի, Էռնստ Լոհմանի, Ն. Ակինյանի, Յոզեֆ Ստրժիգովսկու, Ջեյմս Գրինֆիլդի, Զիգֆրիդ ֆոն Վեգեսակի, Արշակ Չոպանյանի և Ավետիս Ահարոնյանի հողվածները:

³ Տե՛ս **Marquardt J.**, Die Entstehung und Wiederherstellung der armenischen Nation, Berlin, 1919:

գերմանա-թուրքական ռազմական համագործակցությանն Առաջին աշխարհամարտում, հայոց եղերական իրադարձությունների նկատմամբ գերմանական կառավարության դիրքորոշմանը և այս առումով մասնավորապես ընդգծում գերմանական մամուլի՝ անըմբռնելի, մարդասիրական սկզբունքներին հակասող թուրքամետ դիրքորոշումը: Նա սուր քննադատության էր ենթարկում գերմանական կառավարությանը հայերի հանդեպ ցուցաբերած անտարբերության համար, ներկայացնում մի շարք պահանջներ, որոնց իրագործումը համարում էր նոր Գերմանիայի՝ Վայմարյան հանրապետության բարոյական պարտականությունը՝ իբրև գերմանական նախընթաց քաղաքականության սխալների փոխհատուցում: Այսպիսով, Յ. Մարքվարթի աշխատությունը ուներ ոչ միայն գիտական-հետազոտական նշանակություն, այլև, ի հակադրություն պատերազմական ժամանակաշրջանի՝ հակահայկական բովանդակությամբ գրականության, քարոզում էր մարդասիրական գաղափարներ:

Հրատարակության ծախսերի աննախադեպ աճի հետևանքով, այսուամենայնիվ, չհաջողվեց տպագրել ԳՀԸ-ի անդամ Տիրան Մեստուջյանի¹ «Հայաստանի հնագույն շրջանի պատմությունը մինչև Արշակունիներ» (“Die älteste Geschichte Armeniens bis zu den Arschakiden”) խոբագրով արժեքավոր աշխատությունը, որը 1919 թ. հեղինակի ատենախոսությունն էր²:

Գրավոր հրապարակումներին զուգահեռ՝ ԳՀԸ-ն ձեռնամուխ եղավ նաև Հայաստանի թեմայով հրապարակային դասախոսությունների կազմակերպմանը: Այսպես, օրինակ, նրա նախաձեռնությամբ՝ «Գերմանիայի հնագիտական ընկերություն»-ում Վիեննայի համալսարանի պրոֆ. Յ. Ստրժիգովսկին, «Համեմատական իրավագիտության և քաղաքատնտեսության միություն»-ում դր. Ջ. Գրինֆիլդը, Բեռլինի ազգագրության թանգարանում Ռայխսթագի պատգամավոր Դերման-Քյոլնը, «Հասարակական գիտությունների միություն»-ում, «Գերմանական ընկերության արտաքին քաղաքականության հանձնաժողով»-ում, «Գերմանական հաշտեցման լիգայում» և «Գերմանական խաղաղության լիգայում» դր. Մ. Կրիշչյանը, Ֆրայբուրգում քահանա Պաուլ Շվեյնը, Բրաունշվայգում Է. Շթիրը կարդացին հայկական ճարտարապետությանը, համաշխարհային տնտեսության մեջ Հայաստանի ու հայերի

¹ 1915-1919 թթ. Տ. Մեստուջյանը ուսանում էր Հալլեի (Զաալե) համալսարանում աստվածաբանություն ու պատմություն: Այստեղ նա ստացավ փիլիսոփայության դոկտորի գիտական կոչում, իսկ 1919 թ. նշանադրվեց գերմանացի ուսուցչուհի Գերտրուդ Հեոցելի հետ: Թեև նրանք որոշել էին վերջնական բնակություն հաստատել Հայաստանում, սակայն այդ երազանքը դժբախտաբար իրականություն չդարձավ, քանի որ կարճ ժամանակ անց՝ 1920 թ. մարտի 7-ին, Մեստուջյանը մահացավ՝ սուր շնչառական հիվանդությունից: Նրա ուղարկվածությունը տեղի ունեցավ Հալլեի Զյուդֆրիդհոֆ գերեզմանոցում 1920 թ. մարտի 10-ին: Տե՛ս **Meißner A.**, ս շ վ . ա շ խ . , է ջ 427:

² **Stier E.**, Zur Geschichte der Deutsch-Armenischen Gesellschaft (1914-1939) // “Mitteilungsblatt der Deutsch-Armenischen Gesellschaft”, Nr. 5-6, Dezember 1939, S. 8 (72).

ունեցած դերին, Հայկական ինդրին նվիրված դասախոսություններ¹:

1939 թ. տպագրված իր հոդվածներից մեկում Է. Շթիրը տեղեկություններ է հաղորդում այն միությունների մասին, որոնք ստեղծվել էին Գերմանիայի սահմաններից դուրս և ԳՀԸ-ի օրինակով պետք է խթանեին գերմանահայկական մշակութային կապերին ու նպաստեին դրանց ամրապնդմանը: Այսպես՝ «Գերմանա-հայկական կապերով զբաղվող միություններ» ստեղծվեցին Վիեննայում և Բուդապեշտում, Թիֆլիսում հիմնադրվեց «Գերմանահայկական մշակութային միությունը Կովկասում»² (1918 թ. հունիս³):

Թիֆլիսի միության հիմնադիրներն այն հայ երիտասարդներն էին, որ կա՛մ կրթություն էին ստացել Գերմանիայում, կա՛մ սերտ շփումների մեջ էին գերմանական մշակույթի հետ և հայ-գերմանական փոխառնչությունների զարգացման ու խորացման ջատագովներն էին: Միության նախագահ դարձավ Բազիլ Կորգանտֆը (Բարսեղ Ղորղանյան), նրա փոխանորդ՝ Բազիլ Կանաեանցը, քարտուղար՝ Ալեքսանդր Թութայեֆը: Միության աշխատանքներին լայնորեն աջակցում էր Թիֆլիսի գերմանական համայնքի ղեկավարի օգնական Արթուր Լայսթը:

Գերմանա-հայկական մշակութային այս միությունն ուներ շուրջ 100 անդամ: Նրա անդամ դառնալու համար գերմաներենի իմացությունը պարտադիր էր: Ովքեր չէին տիրապետում գերմաներենին, պարզապես համագործակցում էին միության հետ:

Այդ կազմակերպությունն անցկացնում էր շաբաթական ժողովներ, որոնց ժամանակ ընթերցվում էին դասախոսություններ: Այդ նյութերը տպագրվում էին “Kaukasische Post” պարբերականում (“Kaukasische Post”-ում, օրինակ, տպագրվեց Ա. Լայսթի՝ «Հայ ժողովուրդը» (“Das armenische Volk”) վերնագրով հոդվածը, որը հեղինակը ներկայացրել էր միության շաբաթական ժողովներից մեկում)⁴:

1918 թ. վերջին վրաց-հայկական պատերազմի բռնկումը, Անտանտի երկրների, մասնավորապես Անգլիայի ազդեցության ուժեղացումն Անդրկովկասում խոչընդոտներ ստեղծեցին Թիֆլիսի գերմանա-հայկական մշակութային միության գործունեության համար: Մինչև 1919 թ. ավարտը այն

¹ Stier E., Geschäftsbericht der Deutsch-Armenischen Gesellschaft über das Jahr 1921, erstattet auf der Generalversammlung am 30. Juni 1922, unpagiert, EZA Berlin. Նույնը տե՛ս Lepsius-Archiv Potsdam (այսուհետև՝ LAP), № 1221 (6):

² Տե՛ս Stier E., Zur Geschichte der Deutsch-Armenischen Gesellschaft (1914-1939), S. 8 (72):

³ Այդ մասին են վկայում նշված միության անունից 1920 թ. փետրվարի 29-ին Յոհ. Լեփսիուսին և ԳՀԸ-ի վարչությանը ուղարկված զույգ նամակները: Նշենք, որ Յոհ. Լեփսիուսը եղել է այդ միության պատվավոր անդամ: Տե՛ս Hermann G., Die “armenischen Reformen” im Osmanischen Reich, Johannes Lepsius und die Gründung der Deutsch-Armenischen Gesellschaft // 75 Jahre Deutsch-Armenische Gesellschaft. Festschrift, hg. von der Deutsch-Armenischen Gesellschaft, Mainz, 1989, S. 60:

⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 60-61:

ստիպված էր գործել ընդհատակում (ինչպես ԳՀԸ-ն պատերազմի ժամանակ): 1920 թ. միությունը վերադարձավ իր բնականոն գործունեությանը: Նրա նախաձեռնությամբ 1920 թ. փետրվարի 29-ին կազմակերպվեց քննարկում Յոհ. Լեփսիուսի «Գերմանիան և Հայաստանը 1914-1918 թթ.» վերնագրով դիվանագիտական փաստաթղթերի ժողովածուի շուրջ: Ադրբեջանի Հանրապետության Հելենդորֆ կոչվող գերմանական համայնքում գործող ավագ ուսուցիչ Ֆրիդրիխ Նաումանը գերմաներեն թարգմանեց Լևոն Շանթի «Հին աստվածներ» դրաման¹:

ԳՀԸ-ն համագործակցում էր գերմանա-հայկական կապերով զբաղվող միությունների հետ՝ փորձելով այդ կերպ էլ ավելի ամրապնդել իր դիրքերն ու հասնել իր առջև դրված նպատակների իրականացմանը: Օրինակ՝ Թիֆլիսի գերմանա-հայկական մշակութային միության խնդրանքով՝ ընկերությունը վերջինին էր փոխանցում Հայաստանի թեմայով մեծ քանակությամբ գրականություն²:

Ուշագրավ է, որ Գերմանիայի և Հայաստանի գրադարանների միջև զրքերի փոխանակության կազմակերպմանը նպաստելու խնդրանքով 1921 թ. ԳՀԸ-ին դիմեց նաև «Հայաստանի ազգային գրադարան»-ի ներկայացուցիչությունը: Քանի որ այդ խնդրանքը համապատասխանում էր ԳՀԸ-ի կանոնադրության պահանջներին, ընկերությունը հանդես եկավ միջամտությամբ, որի շնորհիվ Պրուսիայի պետական գրադարանի (ներկայիս Բեռլինի պետական գրադարանի) ղեկավարությունը պատրաստակամություն հայտնեց կատարել այդ փոխանակությունը³:

Պատերազմի ժամանակ ԳՀԸ-ն դադարեցրել էր ընդհանուր ժողովների հրավիրումը՝ սահմանափակվելով խորհրդի նիստերով: Պատերազմի ավարտից հետո ընկերության առաջին ընդհանուր ժողովը տեղի ունեցավ Բեռլինի «Էսպլանադե» հյուրանոցում 1919 թ. մայիսի 21-ին Յոհ. Լեփսիուսի նախագահությամբ: Ժողովում է. Շթիրը ներկայացրեց ԳՀԸ-ի՝ 1914-1919 թթ. գործունեության վերաբերյալ ընդարձակ հաշվետվություն, որից հետո անդրադարձավ ընկերության նպատակներին՝ նշելով. «Առայժմ մեր ընկերության քաղաքական առաջադրանքներն ավարտված են: Հիմա մենք կարող ենք մեր ջանքերն ուղղել սկզբից նեթ մեր առջև դրված մշակութային նպատակների իրականացմանը: Հուսով եմ, որ ԳՀԸ-ի ու հայ ազգային շրջանների միջև սկզբնապես գոյություն ունեցող կապը, որն ավելի է ամրացել հայ ժողովրդի համար ծանր ժամանակներում, հնարավորություն կտա հասնել մեր մշակութային նպատակների իրականացմանը: Այն, ինչը մեզ տակավին պակասում է, այդ գործում գերմանական կողմի մասնակցությունն է՝ ավելի

¹ Տե՛ս նույն տեղում, էջ 61:

² Տե՛ս **Stier E.**, Geschäftsbericht der Deutsch-Armenischen Gesellschaft über das Jahr 1920, gestattet auf der Generalversammlung am 28. Mai 1921, unpagiert, EZA Berlin:

³ Տե՛ս նույն տեղում:

լայն ընդգրկումով: Մենք հույսեր ենք փայփայում՝ գերմանացի ժողովրդին պատերազմի պատճառով վրա հասած տառապանքը կնպաստի, որ հետգհետե ավելի բուռն դառնա նրա համակրանքն է՛լ ավելի մեծ վշտի մեջ ընկղմնված հայ ժողովրդի հանդեպ, և Արևմուտքի ու Արևելքի այդ երկու՝ այդքան փութաջան ժողովուրդները կկապվեն մշտական ամուր կապերով՝ օգնելով միմյանց կրկին ոտքի ելնել ծանր պարտությունից հետո (գերմանացիների դեպքում է. Շթիրը նկատի ուներ պատերազմում նրանց պարտությունն ու Վերսալյան պայմանագիրը, հայերի դեպքում՝ հայոց եղերական ողբերգություններն Օսմանյան կայսրությունում – Շ. Մ.): Դրան նպաստելն այսուհետև լինելու է մեր ընկերության առաջնային խնդիրը»¹:

Ընդհանուր ժողովը որոշեց ԳՀԸ-ն գրանցել միությունների գրանցամատյանում²: Մահմանվեց ընկերության անդամավճարների չափը³: Ժողովը ձևավորեց ԳՀԸ-ի խորհրդի նոր կազմ: Վերընտրվեցին կամ ընտրվեցին՝ որպես ընկերության նախագահ Յոհ. Լեփսիուսը, նրա տեղապահներ՝ Պ. Ռոհրբախն ու Ջ. Գրինֆիլդը, քարտուղարներ է. Շթիրն ու Վահան Զախարյանը, որը փոխարինեց Բեռլինից Ժնև տեղափոխված Ավետիք Իսահակյանին, գանձապահ՝ Հաննես Իփիջյանը, որը փոխարինեց պատերազմի ժամանակ թուրքերի կողմից սպանված բժիշկ Արմենակ Հայրանյանին: ԳՀԸ խորհրդի կազմում ընդգրկվեցին նաև՝ պրոֆ. Յ. Մարքվարթը (Բեռլին), պրոֆ. Մարտին Ռադեն (Մարբուրգ), պրոֆ. Հերման Գուրթեն (Լայպցիգ), պրոֆ. Էլիզաբեթ Էհոենտրաուտը (Դրեզդեն), դր. Արմին Թ. Վեգները (Բեռլին), ավագ ուսուցիչ Մարտին Նիպագեն (Մալխին), հյուպատոս Ավետիս Ավետիքյանը, Մ. Պիրանյանը (Բեռլին), Կարլ Չիլինգիրյանը (Համբուրգ), դր. Ս. Կրիշչյանը (Սյունխեն), Գուդինյանը (Լայպցիգ) և դր. Դորթը (Բեռլին): Ընդհանուր ժողովի եզրափակիչ մասում Յոհ. Լեփսիուսը հանդես եկավ «Հայ ժողովրդի ձակատագիրը համաշխարհային պատերազմում» թեմայով զեկուցմամբ⁴:

ԳՀԸ-ն իր մեծ առաջադրանքների իրականացման համար կատարվող աշխատանքներում գերմանական հասարակության լայն շրջանների ակտիվ մասնակցությունն ապահովելու նպատակով նախաձեռնություն ի հայտ բերեց՝ 1921 թ. դեկտեմբերի 10-ին ուղերձ հղելով իր անդամներին⁵: Դրանում

¹ Stier E., Geschäftsbericht der Deutsch-Armenischen Gesellschaft, erstattet auf der Generalversammlung am 21. Mai 1919, S. 19, EZA Berlin. Նույնը տե՛ս u [http://www.armenocide.net/armenocide/armgende.nsf/\\$\\$AllDocs/1919-05-21-DE-001, PA-AA, R 14106](http://www.armenocide.net/armenocide/armgende.nsf/$$AllDocs/1919-05-21-DE-001, PA-AA, R 14106).

² Տե՛ս Stier E., Zur Geschichte der Deutsch-Armenischen Gesellschaft (1914-1939), S. 9 (73): Այդ որոշումը հաջողվեց կյանքի կոչել 1919 թ. հոկտեմբերի 2-ին: Տե՛ս u Meißner A., նշվ. աշխ. էջ 271:

³ Հինգ մարկ վճարող անդամները ստանալու էին ԳՀԸ-ի պաշտոնական օրգան DAK-ը, իսկ 20 մարկ վճարողները՝ նաև լրացուցիչ հրապարակումներ: Տե՛ս u Stier E., An die Mitglieder der Deutsch-Armenischen Gesellschaft, den 30. Juni 1919, EZA Berlin: Նույնը տե՛ս u LAP, № 1227:

⁴ Տե՛ս u Stier E., Bericht über die Generalversammlung, beigelegt dem Geschäftsbericht der Deutsch-Armenischen Gesellschaft, erstattet auf der Generalversammlung am 21. Mai 1919, EZA Berlin:

⁵ ԳՀԸ-ի՝ 1921 թ. մայիսի 28-ի տարեկան Ընդհանուր ժողովին մասնակցում էր ընդամենը 39 անդամ: Տե՛ս u Hofmann T., Armenier in Berlin – Berlin und Armenien, Berlin, 2005, S. 70:

նշվում էր, որ հայերի մշակութային հին ժողովուրդ լինելու, ամենատարբեր ուղորտներում նրանց ունեցած մեծ նվաճումների, նրանց՝ իրենց ընդունակությունների, եռանդի ու ջանասիրության շնորհիվ «Արևելքում արդի քաղաքակրթության անփոխարինելի մարտիկներ» լինելու մասին տեղյակ են միայն գերմանական հասարակության՝ այդ ժողովրդի հետ գիտական կամ գործնական շփումներ ունեցած նեղ շրջանները, մինչդեռ լայն շերտերը նրա մասին, հին նախապաշարմունքներից զատ, շատ բան չգիտեն: Նշվում էր նաև, որ վարչությունը Հայաստանի ու հայերի մասին խորը գիտելիքների տարածման հարցում, չնայած այդ ուղղությամբ նախաձեռնություններին, ինքնուրույնաբար ի վիճակի չէ ցանկալի արդյունքի հասնելու: Հետևաբար, այն դիմում էր ընկերության անդամներին՝ խնդրելով իր հետ սերտորեն համագործակցելով՝ նպաստել իրենց բարեկամների թվաքանակի ընդլայնմանը¹:

Գովազդի համար պետք է կազմակերպվեին հայկական մշակույթի, պատմության և այլ թեմաներով դասախոսություններ Գերմանիայի տարբեր բնակավայրերում: Հնարավորինս շատ անդամներ ներգրավելու համար տարեկան նվազագույն անդամավճարը մնալու էր անփոփոխ՝ հինգ մարկ: Անդամակցությունը հաստատվելու էր ընկերության վարչության տրամադրած համապատասխան վկայականներով՝ անդամակցության տոմսերով²:

ԳՀՀ-ին հաջողվեց համագործակցության մեջ մտնել «վստահելի անձանց» հետ, որոնք գործում էին Գերմանիայի 21 խոշոր քաղաքներում՝ իրենց եռանդն ի սպաս դնելով ընկերության շահերին: «Ծառայություն մատուցելով մարդասիրությանն ու արդարությանը,– նշում էր Է. Շթիրիը,– որքան շատ բացթողումներ են արվել ու մեղքեր են գործվել պատերազմական տարիներին, այնքան ավելի շատ այժմ պետք է փոխհատույց լինել ու սխալներն ուղղել՝ ի պատիվ Գերմանիայի, ի նպաստ Հայաստանի փրկության»³:

ԳՀՀ-ի գործունեության համար մեծ հաջողություն էր, որ, ինչպես արդեն նշվել է, 1918 թ. մայիսին Հայաստանի անկախության հռչակումից հետո Բեռլինում բացվել էր հայկական դեսպանություն, և, որ ամենակարևորն է, դեսպան էր նշանակվել ընկերության վարչության անդամ դր. Ջ. Գրինֆիլդը: 1922 թ. Խորհրդային Ռուսաստանի ու Գերմանիայի միջև Ռապալոյի պայմանագրի ստորագրումից և Բեռլինում խորհրդային դիվանագիտական առաքելության հաստատումից հետո Ջ. Գրինֆիլդը դարձավ Խորհրդային Հայաստանի անկախ «հավատարմատարը» Բեռլինում⁴:

¹ St' u Das Schreiben des Vorschtdands der Deutsch-Armenischen Gesellschaft an ihre Mitglieder, LAP, № 1223:

² St' u նույն տեղում:

³ Stier E., Geschäftsbericht der Deutsch-Armenischen Gesellschaft über das Jahr 1921, erstattet auf der Generalversammlung am 30. Juni 1922, unpagiert, EZA Berlin: Ն ու յ ն ը տե ' u LAP, № 1221 (6).

⁴ St' u Stier E., Zur Geschichte der Deutsch-Armenischen Gesellschaft (1914-1939), S. 9 (73):

Այսպիսով, Առաջին աշխարհամարտի ավարտից հետո ԳՀԸ-ն ջանում էր նպաստել գերմանացի ու հայ ժողովուրդների մշակութային կապերի զարգացմանն ու ամրապնդմանը: Հատկանշական է, որ հայոց ողբերգական իրադարձությունների թեմայի լուսաբանմանը զուգահեռ՝ ընկերությունը փորձում էր գերմանական հասարակությանը ծանոթացնել հայ արարչագործ մտքի նվաճումներին, ներկայացնել հայերին որպես մշակութային բարձր արժեքներ կրող ժողովրդի, Հայաստանը՝ որպես հին մշակութային երկիր: Այս գործում ակնհայտորեն առաջնորդող դերակատարություն էր ստանձնել Է. Շթիրը, որն իր հավաստարիմ գործընկերների հետ անխնայ շարունակեց գերմանացի ու հայ ժողովուրդների մշակութային մերձեցմանն ուղղված աշխատանքների իրականացումը մինչև Երկրորդ համաշխարհային պատերազմի բռնկումը:

Грануш Саакян – *Усилия Герmano-армянского общества в деле развития культурных связей двух народов в 1918-1921 гг.*

Герmano-армянское общество, созданное в 1914 г. в Берлине по инициативе Иоганнеса Лепсиуса, поставило перед собой цель поспособствовать сотрудничеству армянского и немецкого народов в сфере культуры, формированию прочных и продолжительных взаимоотношений. Однако спустя два месяца после основания Общества началась Первая мировая война, и первоначальная программа Общества, продиктованная трагическими событиями в Западной Армении, происходящими под предлогом войны, отошла на второй план. Первоочередной же задачей стала организация спасения армян. Общество вернулось к своей первоначальной миссии только после установления мира и провозглашения в Закавказье независимого армянского государства. Статья освещает и всесторонне представляет ту работу, которую проводило Общество с самого начала для решения поставленных перед ним задач.

Hranush Sahakyan – *German-Armenian Society's Efforts to Develop Cultural Relations between the Two Peoples in 1918-1921*

In 1914, by the initiative of Johannes Lepsius the German-Armenian Society (GAS) was set up in Berlin to promote the cooperation of German and Armenian peoples on cultural grounds and establish strong and lasting relations between them. However, two months after the establishment of the society, World War I broke out, under the guise of which tragic events happened in Western Armenia, which cancelled the original plan of the society, and its primary goal became the organization of the salvation of endangered Armenians. GAS returned to its original mission only after the establishment of peace and the declaration of an independent Armenian state in the South Caucasus. The article provides a comprehensive overview of the work the society had been doing to achieve its goals since its establishment.

Ներկայացվել է 17.02.2020

Գրախոսվել է 27.03.2020

Ընդունվել է տպագրության 30.06.2020